

## “Անահիտ”ի ընթերցողներուն

---

Այս թիւով Անահիտը կը մտնէ նոր շրջանի իր հիմնադրորդ տարին։ Ներկայ տարուան ընթացքին (յուլիս 1933 — յունիս 1934) Անահիտը լոյս պիտի տեսնէ երեք ամիսն անգամ մը։ Անցեալ տարի ստիպուեցանիք երկու միացեալ թիւի մէջ ամփոփել հանդէսին տարեկան վեց թիւը, որովհետեւ բաժանորդներու մէկ տոռուար մասին բաժնեգնի վճարումը ծայրայեղօրէն յապաղեցնելը եւ տոլարին ու անգլ. ոսկիին անկմամբ՝ բաժնեգիններու շատերէն իւրաքանչիւրին վրայ մօտ 35 ֆրանքի կորուսոր կը ստիպէին մեզ այդ վերածումով հանդէսը կանգուն պահելու։

Այս բովածին ուր այս թիւը երապարակ կը հանենիք, մեր բաժանորդներէն շատերը դեռ չորրորդ տարուան, եւ ոմանի նոյն իսկ երրորդ տարուան իրենց բաժնեգինը չեն վճարած։ Կը խնդրենի առողջութեամբ որ հանին վերջապէս իրենց

սարտերը վճարել ինչքան կարելի է շուտ։

Մենք ունինք նաև, բարեբաղդաբար, բաժանորդներ որոնք իւրաքանչիւր տարեշրջանին չափանիքինը՝ առաջին թիւը լոյս տեսնելէն ինչկ առաջ կը դրկեն մեզի։

Ունինք նաև բարեկամներ որ նուիրատութիւններով կ'օգնեն մեզի այս դժուար գործին մէջ։ Ատոնց մեր շնորհակալութիւնները կը յայտնենք։ Եթէ մեր բոլոր բաժանորդները այդ ձեւով վարուէին, Անահիտը կրնայինք ամենայն կանոնաւորութեամբ երատարակել երկու ամիսն անգամ մը, ինչպէս ըրինք առաջին երկու տարիններու ընթացքին։ Կը սիրենք յուսալ որ այսուհետեւ բաժնեգիններու վճարումը տեղի կ'ունենայ աւելի փութեամբ ու կանոնաւոր կերպով։

Ա. Զ.